ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 02/18.6/275-2021 «12» 01 2021թ.

«ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԱՐԱՏ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
/ք. Երևան, Վարդանանց փ. 10/37/

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար տնտեսական ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով 2020թ. հունիսի 29-ին Վարչապետի աշխատակազմի (այսուհետ Պատվիրատու) և «ԲԼԱՄՄՈ» ՍՊԸ-ի (այսուհետ Ընկերություն) միջև կնքվել է N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Ընկերությունը պարտավոր է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով տեսչական մարմնին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված տնտեսական ապրանքներն ու նյութերը, սակայն նշված հավելվածով սահմանված 2-րդ չափաբաժնի՝ «պոլիէթիլենային պարկ, սննդային» ապրանքը Պայմանգրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում չի մատակարարվել Ընկերության կողմից:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն կետի «բ» ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը

խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով տեսչական մարմնի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/06.2/4/7917-2020 գրությունը, որով վերջինիս կողմից փաստվում է այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 2020թ. հունիսի 29-ին Ընկերության հետ կնքված N ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/17-1 պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից ստանձված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը» հաստատելու մասին N526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՎԱՀԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ

Կատարող՝ գործերի կառավարչություն
Հեռ. 010 515 929